ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ

YEREVAN STATE UNIVERSITY

**Faculty of Geography and Geology**

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100 -ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր
Երևան, սեպտեմբերի 27-29, 2018թ.

# CONTEMPORARY ISSUES OF GEOGRAPHY AND GEOLOGY

Dedicated to the 100th Anniversary of the Yerevan State University,
International Conference Proceedings
September 27-29, 2018, Yerevan

*Ժողովածուն տպագրվել է «ՄԱԿ ԿՓՇԿ ներքո Հայաստանի չորրորդ ազգային հաղորդագրության և երկամյա առաջընթացի երկրորդ զեկույցի պատրաստում» ՄԱԶԾ-ԳԷՖ/00096445 Ծրագրի աջակցությամբ, որն իրականացվում է ՄԱԶԾ կողմից ՀՀ բնապահպանության նախարարության համակարգման ներքո՝ Գլոբալ էկոլոգիական ֆոնդի ֆինանսավորմամբ:*

*The Proceedings publication is supported by the "Development of Armenia's Fourth National Communication to the UNFCCC and Second Biennial Update Report" UNDP-GEF/00096445 Project, implemented by UNDP under coordination of the Ministry of Nature Protection of the Republic of Armenia and financed by Global Environment Facility.*

ԵՐԵՎԱՆ - 2018 – YEREVAN

ՀՏԴ 911:551:06
ԳՄԴ 26.8+26.3
Ա 653

*Գիտաժողովի նյութերը տպագրվել են*
*ԵՊՀ Գիտական խորհրդի որոշմամբ*

**Խմբագրական կազմ՝**
Գրիգորյան Մարատ
Գրիգորյան Արսեն
Դավթյան Պետրոս
Խաչատրյան Շահեն
Հարությունյան Դիանա
Հարությունյան Նարեկ
Հայրոյան Սարգիս
Մովսեսյան Ռուբեն
Մարկոսյան Գագիկ
Պոտոսյան Ակսել
Սուվարյան Սեյրան
Վարդանյան Թրահել
*Մանուկյան Եսթեր՝ պատասխանատու քարտուղար*

Ա 653 Աշխարհագրության և երկրաբանության արդի հիմնախնդիրները: (Երևանի պետական համալսարանի հիմնադրման 100 -ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, Երևան, սեպտեմբերի 27-29, 2018).
Եր.:
ԵՊՀ հրատ., 2018 – 404 էջ:

Materials of the Conference are published
on the decision of the Scientific Commission of YSU

**Editting Committee**
Grigoryan Marat
Grigoryan Arsen
Davtyan Petros
Khachatryan Shahen
Harutyunyan Diana
Harutyunyan Narek
Hayroyan Sargis
Movsesyan Ruben
Markosyan Gagik
Potosyan Aksel
Suvaryan Seyran
Vardanyan Trahel
*Manukyan Yester - Executive secretary*

ՀՏԴ 911:551:06
ԳՄԴ 26.8+26.3

ISBN 978-5-8084-2333-6

© ԵՊՀ հրատարակչություն, 2018
© YSU Publishing House, 2018

Значение δ может быть получено для объектов в реальном состоянии ($\delta_p$) и для этих же объектов в перспективе ($\delta_п$) путем повышения баллов до возможного максимума, что зависит от типа и места объекта. После этого расчтивается разница:

$$\boldsymbol{\Delta = \delta_п - \delta_p,}$$

где Δ – разница между реальной и перспективной интегральной оценкой аттрактивности.

Предложенная методология и метод позволяют дать сравнителную оценку туристского потенциала территорий и найти ее сильные и слабые стороны. Метод особенно приемлем для горных территорий, где социальная и природная среда отличается большим разнообразием. Метод может стать прикладным инструментом для оценки устойчивого развития туризма.

**ЛИТЕРАТУРА**


1. Зырянов А.И. Регион: пространственные отношения природы и общества/ Пермь. гос. ун- т. 2006. 372с
2. Сафарян А.А. Подходык оценке туристского потенциала территорий // Географический вестник. 2015. No 1(32), с. 89-103
3. Пенский О.Г., Черников К.В. Основы математической теории эмоциональных роботов: монография. Пермь, 2010, 256 с.


METHODOLOGY OF THE INTEGRAL ASSESSMENT OF TOURISTIC POTENTIAL OF A TERRITORY


Safaryan A.A., Aleksanyan G.P.

Perm State University, Perm, Russian Federation, azatsafaryan@mail.ru

Yerevan State University, Yerevan, Republic of Armenia, goraleksanyan@ysu.am



ANNOTATION

The assessment of the touristic potential of the territory is questioned here. Some basic aspects and problems of its implementation are discussed in the article. Integral assessment method for touristic potential is suggested which allows to asses any kind of territory and carry out a comprehensive and comparative research and analyzes.


## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՍԵԶՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


**Ալեքսանյան Գ.Փ.**

Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստանի Հանրապետություն

goraleksanyan@ysu.am


Զբոսաշրջության և զբոսաշրջային դեստինացիայի կայուն զարգացումը պայմանավորված է բազում գործոններով՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական,

մշակութային, բնական, ֆինանսական, ենթակառուցվածքային, մարդկային և այլն: Այդ գործոնները, համալիր կերպով ազդելով զբոսաշրջության վրա, պայմանավորում են ոչ միայն նրա զարգացման ուղղությունները, արագությունը, առաջնահերթությունները, այլ նաև իրենք նույնպես ենթարկվում են մեկ այլ, առավել մեծամասշտաբ գործոնի՝ սեզոնայնության, ազդեցությանը: Վերջինիս պատճառով ցանկացած զբոսաշրջային դեստինացիա ունենում է ֆիզիկական, ֆինանսական և այլ պարամետրերի ժամանակավոր անհավասարակշիռ վիճակներ:

*Զբոսաշրջության սեզոնայնությունը որպես բնաաոցիալական և տարածաժամանակային երևույթ:* «Սեզոնը» (ֆրնս. «saison») ամենահայտնի ձևով, ընկալվում է որպես տարվա 4 եղանակներից մեկը: Քեմբրիջի բառարանի սահմանման համաձայն սեզոնը «տարվա այն ժամանակահատվածն է, երբ տեղի է ունենում այն, ինչ կրկնվում է յուրաքանչյուր տարի»: Այն սահմանվում է նաև որպես «տարվա ամենակարևոր ժամանակաշրջան, որի ընթացքում դիտվում է որևէ երևույթի առատություն» (Bender, Schumacher, Stein, 2005): Սեզոնայնությունը Հիլլեբերգը սահմանում է որպես «եղանակի, օրացույցի և տնտեսվարող սուբյեկտների կողմից ընդունած որոշումների պատճառով առաջացող համակարգային ներտարեկան, հաճախ ոչ կանոնավոր, շարժում: Այդ որոշումները կախված են տնտեսվարող սուբյեկտների նախասիրություններից, ակնկալիքներից և արտադրության մեջ առկա տնտեսության կազմակերպման նախընտրելի մեթոդներից» (Hylleberg, 1992): Այսինքն՝ այս սահմանման մեջ սեզոնայնությունը ներկայացվում է որպես և՛ բնական, և՛ սոցիալ-տնտեսական առաջացման պատճառներ ունեցող երևույթ: Այն մեկնաբանվում է նաև որպես «տարվա ընթացքում անհավասարության կամ տատանումների առկայություն՝ պայմանավորված որևէ եղանակի հետ առնչությամբ» (Bender, Schumacher, Stein, 2005): Այս ընդհանուր մեկնաբանություններից ելնելով՝ տարբեր գիտնականներ զբոսաշրջությունում սեզոնայնությանը տվել են տարբեր մեկնաբանություններ: «Սեզոնայնությունը զբոսաշրջությունում ժամանակավոր անհավասարակշիռ վիճակ է, որը կարող է արտահայտվել այնպիսի տարրերի տեսքով, ինչպիսիք են այցելությունների քանակը, դրամական ծախսերը, ավտոտրանսպորտի քանակը և մայրուղիների ծանրաբեռնվածությունը, զբաղվածությունը, ատրկցիոններ հաճախումների քանակը» (Butler, 2011): Այսպիսով սեզոնայնությունը զբոսաշրջությունում «տարվա ժամանակահատվածից կախված զբոսաշրջային պահանջարկի տատանումների աստիճանն է» (Biederman, 2000)՝ պայմանավորված «մարդկանց ժամանակավոր տեղաշարժմամբ» (Chung, 2009) և «տարվա կարճ ժամանակահատվածում զբոսաշրջային հոսքերի կենտրոնացման հատկությամբ» (Allcock, 1989): Այն «գլոբալ բնույթ ունեցող երևույթ է» (Chung, 2009), որը կարող է տեղի ունենալ «օրական, շաբաթական, ամսական կամ տարեկան կտրվածքով» (Cooper, 2011): Վերջինս պայմանավորված է տվյալ տարածքի (զբոսաշրջային դեստինացիայի) աշխարհագրական դիրքով (*բոլոր տարատեսակներով-Ա. Գ.* ): Սեզոնայնությունը, զբոսաշրջությունում լինելով գլոբալ երևույթ, տեղից տեղ խիստ տարբեր է և կախված է նաև տարածքի (զբոսաշրջային

դեստինացիայի) բնական և սոցիալական առանձնահատկություններից: Այսինքն՝ սեզոնային զբոսաշրջային պիկեր նկատվում են ոչ միայն ժամանակային կտրվածքով, այլ նաև՝ տարածական: Ասվածից հետևում է, որ տեղի է ունենում զբոսաշրջային հոսքերի ոչ միան ժամանակային, այլ նաև տարածական բևեռացում: Այսինքն՝ սեզոնայնությունը զբոսաշրջությունում համարվում է զբոսաշրջային տարբեր պարամետրերի *տարածական* և *ժամանակային* անհավասարությունն արտահայտող երևույթ և ունի ցիկլային (տարածաժամանակային) բնույթ:

*Զբոսաշրջության սեզոնայնության պատճառները:* Առանձնացվում է զբոսաշրջությունում սեզոնայնության առաջացման երկու հիմնական պատճառ՝ ա/ *բնական* և բ/ *ինստիտուցիոնալ* (Bar-On, 1975; Butler, 2001): *Առաջինը* վերաբերում է բնական երևույթների կանոնավոր ժամանակավոր տատանումներին և հատկապես կապված է կլիմայի և տարվա իրական եղանակների հետ: Ժամանակավոր տատանումների շարքին են դասվում ջերմաստիճանի փոփոխությունները, տեղումների տարբերությունները, արևափայլի տևողությունը և այլն: Եվ, քանի որ «դրանք կոնկրետ դեստինացիայի համար համեմատաբար կայուն են և աչքի են ընկնում չնչին փոփոխություններով» (Bigović, 2011), հետևաբար առավել կանխատեսելի են: *Երկրորդը* կապված է օրենսդրության, կրոնի, պատմական համաձայնագրերի, ավանդույթների, սովորույթների և մարդկանց, պետության, հասարակական միավորի մշակութային և սոցիալ-տնտեսական կենսակերպը պայմանավորող այլ գործոնների հետ: Այսինքն՝ գործոնների այս խումբը պայմանավորված է մարդկային գործոնով: Զբոսաշրջության սեզոնայնության վրա մարդկային գործոններից առավել մեծ ազդեցություն ունեն սուրբ օրերը (Սուրբ Ծնունդ, Սուրբ Զատիկ, Ռամադան և այլն) և դպրոցական, համալսարանական, աշխատանքային արձակուրդները/ազատ օրերը («օրացուցային էֆեկտ» (Grizane, 2016)), տարատեսակ փառատոները, սպորտային միջոցառումները, որսորդությունը, նորաձևությունը (*սոցիալական կարգավիճակի ընդգծման նպատակով – Ա. Գ.*, հաճախ կոչվում է նաև «սոցիալական սեզոնայնություն» (Butler, 2001)): Ներկայումս առաձնացվում է նաև *երրորդ պատճառը*՝ սոցիալ-տնտեսականը (Grizane, 2016), որն ըստ էության իր բովանդակությամբ կարելի է համարել ինստիտուցիոնալի տարատեսակ: Այս գործոնները պատճառ են դառնում, որպեսզի տարվա կտրվածքով զբոսաշրջային հոսքերը տարածական և ժամանակային առումով արտահայտվեն որոշակի պիկերի տեսքով: Ելնելով սեզոնայնության տարածական անհավասար արտահայտվածությունից՝ տարածքները (զբոսաշրջային դեստինացիաները) բաժանվում են երեք տիպերի (Butler, 2001)՝ ա/ մեկ պիկով, բ/ երկու պիկով, գ/ առանց պիկի տարածքներ (*սեզոնայնության տարածական խմբավորում – Ա. Գ.*): Իսկ սեզոնայնության ժամանակային խմբավորումը բաղկացած է 4 տիպի սեզոններից՝ 1/ պիկ (թոփ), 2/ բարձր, 3/ ցածր, 4/ «մեռյալ» (Калинина, 2011): Վերջիններս իրարից տարբերվում են հիմնականում ըստ զբոսաշրջային հոսքերի քանակի, զբոսաշրջային ծառայությունների սպառման ծավալների և գների, եղանակային պայմանների:

Վերոնշյալ պիկերի տարածաժամանակային վարքը կախված է հիմնականում տվյալ զբոսաշրջային տարածքի աշխարհագրական դիրքից:

*Սեզոնայնության սոցիալ-մշակութային ազդեցությունը:* Սոցիալ-մշակութային ազդեցությունը կարելի է բնորոշել որպես «երկարաժամկետ կուտակման էֆեկտ» ունեցող ազդեցություն, հատկապես մարդկանց՝ միմյանց նկատմամբ ունեցած վերաբերմունքի տեսանկյունից: Պիկ և բարձր սեզոնների ժամանակահատվածում նկատվում է զբոսաշրջային դեստինացիայի ծանրաբեռնվածություն՝ գերբնակեցում, կոմունալ ծառայությունների արժեքի զգալի ավելացում, աղմուկ, հանցագործության աճ՝ մեծ թվով մարդկանց պատճառով, հավելյալ ոստիկանական և բժշկական անձնակազմի անհրաժեշտություն, դժբախտ պատահարների քանակի ավելացում, կյանքի ավանդական ոճի վրա հնարավոր բացասական ազդեցություն (Bigović, 2011; Butler, 2001): Այս սեզոնների ժամանակ նաև նկատվում է զբոսաշրջային ինդուստրիայի ձեռնարկություններում աշխատող մարդկային ռեսուրսների ֆիզիկական և բարոյական գերծանրաբեռնվածություն, որոնց աշխատանքն ըստ էության շուրջօրյա է լինում: Տեղացիների վարքը, մեծաթիվ զբոսաշրջիկներ ունենալու պատճառով, զբոսաշրջիկների նկատմամբ կարող է փոխվել՝ ձեռք բերելով ապատիայի բնույթ (ինչպես, օրինակ, տեղի ունեցավ Բարսելոնայում 2017 թ. ): Այսինքն՝ ոչ բոլոր շահառու կողմեր են մշտապես շահագրգռված մեծ թվով շուրջտարյա (non-seasonal) զբոսաշրջիկներ ունենալու համար: Իսկ ցածր և «մեռյալ» սեզոնները նպաստում են տեղացի բնակչության «ինքնության պահպանմանը» (Bigović, 2011) և ոլորտում ներգրավված աշխատողների բարոյաֆիզիկական ուժերի վերականգնմանը:

*Սեզոնայնության տնտեսական ազդեցությունը:* Սեզոնայնության ազդեցությունը տնտեսական գործունեության վրա համեմատաբար ավելի ակնառու է և արագ է զգացվում: Պիկ և բարձր սեզոնների ժամանակ նկատվում են դրամական մեծ հոսքեր, տեղական ու ազգային բյուջեի և աշխատատեղերի ավելացում, տեղի է ունենում ռեսուրսների անարդյունավետ (ոչ կայուն) օգտագործում, զգացվում է որակյալ սենյակների պակաս, զբոսաշրջային տարրողունակության անհամապատասխանություն: Ցածր և «մեռյալ» սեզոնների ժամանակ սեզոնայնության ազդեցությունը տնտեսապես արտահայտվում է հիմնականում բացասականորեն: Այդ ժամանակ ի հայտ են գալիս հետևյալ հիմնախնդիրները՝ եկամուտների կրճատում, կապիտալի ցածր եկամտաբերություն, զբաղվածության հետ դժվարություններ (լրիվ դրույքով աշխատակիցներ ընտրելու և պահելու) և այլն: Միաժամանակ պետք է ընդգծել, որ այս սեզոնների ժամանակ հնարավորություն է ստեղծվում կատարել ենթակառուցվածքների վերանորոգման և նոր սեզոնին նախապատրաստման աշխատանքներ: Սեզոնայնությունը տնտեսական տեսանկյունից հիմնականում արտահայտվում է «աշխատաշուկայի անկայունությամբ, որով էլ բնորոշվում է զբոսաշրջային գործունեության մեջ զբաղվածության կարճաժամկետությունը» (Kellens, 2012): Հետևաբար սեզոնայնությունն ազդում է ձեռնարկությունների մրցունակության վրա (Grizane, 2016). ձեռնարկատերերը չեն ուզում մեծ միջոցներ ներդնել անձնակազմի *(որն աչքի է ընկնում բարձր հոսունությամբ- Ա. Գ. )* ուսուցման

և զարգացման վրա: Այս գործոններն էլ վերջնահաշվարկում ազդում են մատուցվող ծառայությունների որակի վրա, որը կարող է և բացասականորեն ազդել հաճախորդների վերջնական բավարարվածության վրա և կրկնակի այցելության ցանկության «վերացման» պատճառ դառնալ: Ցածր և «մեռյալ» սեզոնները հնարավորություն են տալիս զբոսաշրջային դեստինացիան որպես ապրանք ներկայացնելու համար, մշակել զբոսաշրջային տարբեր ապրանքներ և առաջարկել նոր, այլընտրանքային (հիմնական ծառայություններից տարբերվող, լրացնող) ծառայություններ (օրինակ՝ լեռնային կուրորտներում, որոնք հիմնականում օգտագործվում են լեռնադահուկային զբոսաշրջություն կազմակերպելու համար, ամռան ընթացքում առաջարկել արշավային տուրեր, ջիպպինգ, լեռնամագլցում, պարապլանիզմ և այլն): Վերջինս հատկապես տնտեսապես ձեռնտու կլինի այն զբոսաշրջային գործակալությունների համար, որոնք ունեն մարկետինգային նեղ խորշ ու մասնգիտացվածություն:

*Սեզոնայնության բնապահպանական ազդեցությունը:* Սեզոնայնության բնապահպանական ազդեցությունը հիմնականում ընկալվում է բացասական առումով (պիկ և բարձր սեզոնների համար): Այն գլխավորապես ներկայացվում է (Grizane, 2016; Bender, Schumacher, Stein, 2005; Butler, 2001) որպես շրջակա միջավայրի աղտոտում և ռեսուրսների գերշահագործում, հողային ռեսուրսների դեգրադացում (հատկապես միևնույն արահետով մեծ թվով զբոսաշրջիկների հոսքի պատճառով, «Coca-Cola արահետների» առաջացում), ջրային ռեսուրսների աղտոտում (կոյուղաջրերի քանակի ավելացում) և գերօգտագործում (մեկ զբոսաշրջիկն օրական 400 լ ջուր կարող է սպառել): Այս ազդեցությունը հատկապես աղետալի է այն զբոսաշրջային դեստինացիաների համար, որոնց զբոսաշրջային առաջարկները բնահենք են: Միաժամանակ սեզոնայնության (ցածր և և «մեռյալ» սեզոններ) շնորհիվ ապահովվում են նաև բնական միջավայրի վերականգնման հնարավորությունները. «Յուրաքանչյուր տարվա ցածր և «մեռյալ» սեզոնները կարող են օգտակար լինել շատ բնական ռեսուրսների համար՝ հնարավորություն ստեղծելով ապահովել նրանց վերարտադրությունը» (Bigović, 2011): Այս տեսանկյունից սեզոնայնությունը դրական է համարվում զբոսաշրջային դեստինացիայի բնական միջավայրի համար:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ սեզոնայնությունը համարվում է զբոսաշրջության կայուն զարգացման ճիշտ քաղաքականության մշակման կարևորագույն գործոն: Նրա պատճառով առաջացող հիմնախնդիրներն ունեն բնապահպանական, սոցիալ-մշակութային և տնտեսական բնույթ և որոշում են զբոսաշրջության զարգացման ռազմավարական ուղղությունները և հեռանկարները: Ընդհանուր առմամբ զբոսաշրջության սեզոնայնությունը հիմնախնդիրների ամբողջության տեսքով արտահայտված զարգացման հնարավորություն է:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Калинина О.А. Влияние фактора сезонности на ассортимент туристкого агенства. Вестник РМАТ, 3, Эконимка туризма, 2011, стр. 80-87
2. Allcock J.B. (1989). Seasonality. Tourism marketing and management handbook, Prentice Hall, London, 1989, pp. 387-392.
3. Bar-On R. V. Seasonality in Tourism. London: Economist Intelligence Unit., 1975
4. Bender O. , Schumacher K.P, Stein D. Measuring Seasonality in Central Europe's Tourism – how and for what? 10th Intern. Conf. on Info. & Com. Techn. (ICT) in Urban Planning and Spatial Development and Impacts of ICT on Physical Space, 2005, pp. 303-309
5. Biederman P. S. Travel and tourism: An industry primer. Upper Saddle River: Pearson Education. 2000
6. Bigović M. Quantifying seasonality in tourism: a case study of Montenegro, Academica Turistica, Year 4, No. 2, December 2011, pp. 15-32
7. Butler R.W. Seasonality in Tourism. Issues and Implications. Advances in tourism research series, Series Editor: Professor Stephen Page, University of Stirling, UK, 2001, pp. 5-18
8. Chung J. Y. Seasonality in tourism: A review. e-Rev. of Tourism Research,7(5),2009,pp.82-96
9. Cooper C., Wanhill S., Fletcher J., Gilbert D., Fyall A. Tourism: Principles and practice. Harlow: Pearson Education. GOV. Retrieved July 18, 2011
10. Grizane T. Measuring tourism seasonality in regions of Latvia. Proceedings of the 2016 International Conference "Economic science for rural development" No 42 Jelgava, LLU ESAF, 21-22 April 2016, pp. 59-64
11. Hylleberg S. General introduction.Modelling seasonality. Oxford Uni. Press.1992, pp. 3-14
12. Kellens W., Neutens T., Deckers P., Reyns J., De Maeyer Ph. Coastal Flood Risks and Seasonal tourism: Analysing the Effects of Tourism Dynamics on Casualty Calculations. Natural Hazards, Volume 60, Issue 3, 2012, pp.1211-1229.


SEASONALITY OF TOURISM: PROBLEMS AND POSSIBILITIES


Aleksanyan G.P.

Yerevan State University, Yerevan, Republic of Armenia, goraleksanyan@ysu.am



ANNOTATION

The phenomenon of seasonality in tourism is discussed and analyzed in the article. The main problems and possibilities related to tourism seasonality are highlighted in the framework of sustainable tourism. It is concluded that seasonality of tourism is a complex of problems which creates new possibilities for development.


# ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԴԵՍՏԻՆԱՑԻԱՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ


**Նավասարդյան Ա.Վ.**

Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստանի Հանրապետություն

amalia.navasardyan@gmail.com


Հասարակական կյանքի զարգացումը հանգեցրեց տնտեսության նոր ճյուղերի և մարդկային գործունեության նոր տեսակների ի հայտ գալուն, որոնց թվում նաև

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ**......3

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ...... 3

Վարդանյան Թ. Գ. ......3

ՀՀ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾԱԼՔԱՎՈՐ ՄԱՐԶԻ ԵՐԿՐԱԿԵՂԵՎԻ ՆՍՏՎԱԾՔԱՅԻՆ ՇԵՐՏԻ ՁԵՎԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԵՏԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ ...... 8

Սարգսյան Ռ.Ս., Հովհաննիսյան Հ.Հ. ......8

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ...... 13

Վարդանյան Թ. Գ., Գրիգորյան Ա.Թ. ......13

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ...... 17

Դայան Ս.Ծ. ......17

ԼԱՆԴՇԱՖՏԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾԻՔ ...... 21

Հարությունյան Ն.Ա. ......21

ԴԵՆԴՐՈՊԱՐԿԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ . 27

Խալաթյան Ա.Ա. ......27

ՀՀ ԲՆԱՀՈՂԱՅԻՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՀՈՂԱՏԻՊԵՐԸ ԸՍՏ WRB ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ...... 31

Ղազարյան Հ.Ղ., Կրոյան Ս.Ջ. ......31

ԱՋԱՏ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ԳԻՀՈՒ ՆՈՍՐԱՆՏԱՌՆԵՐԻ ՖԼՈՐԱՆ, ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԻՃԱԿՆ ՈՒ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ...... 36

Սամվելյան Ն. Ի. Գասպարյան Ա. Ս. Հակոբյան Հ. Պ. Ստեփանյան Ն. Տ. ......36

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ...... 41

Ավետիսյան Գ. Ռ. ......41

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ...... 45

Եղիազարյան Ա. Ա.,Մուրադյան Վ.Ս. ....................................................................45

ԽԱՂՈՂԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԿԱՊԸ ՎԵԳԵՏԱՑԻՈՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՕԴԻ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂՈՒՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՏ (ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՕՐԻՆԱԿՈՎ) ........................................ 50

Հովհաննիսյան Ն., Վարդանյան Թ. ....................................................................50

ЭКЗОГЕННЫЕ ГЕОЛОГИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В ЛАНДШАФТАХ ИТУМ-КАЛИНСКОЙ МЕЖГОРНОЙ КОТЛОВИНЫ ........................................ 55

Гакаев Р.А ....................................................................55

ЕСТЕСТВЕННОЕ ВОЗОБНОВЛЕНИЕ ГОРНО_ЛУГОВЫХ ЛАНДШАФТОВ ПРИЭЛЬБРУСЬЯ (НА ПРИМЕРЕ ПЛАТО БИЙЧЕСЫН) ........................................ 59

Джанибекова Х.А. ....................................................................59

ФИЗИКО-ГЕОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ЛАНДШАФТОВ ПРИТЕРСКОГО ПЕСЧАНОГО МАССИВА ........................................ 64

Абумуслимов А.А., Абумуслимова И.А. ....................................................................64

ФИЗИКО-ГЕОГРАФИЧЕСКАЯ ДИФФЕРЕНЦИАЦИЯ ТЕРРИТОРИИ ЧЕЧЕНСКОЙ РЕСПУБЛИКИ........................................ 69

Гуня А.Н., Петрушина М.Н., Лысенко А.В., Гайрабеков У.Т, Гагаева З.Ш., Караев Ю.И. ....................................................................69

АКАДЕМИЧЕСКИЕ ЭКСПЕДИЦИИ НА КАВКАЗЕ........................................ 75

Керимов И.А., Гагаева З.Ш., Ахматханов Р.С., Бадаев С.В., Чимаева Х.Р. ....................................................................75

АНАЛИЗ КАРТОГРАФИЧЕСКИХ МАТЕРИАЛОВ XVII-XIX ВВ. ПО СЕВЕРНОМУ КАВКАЗУ ........................................ 80

Керимов И.А., Гагаева З.Ш., Романова О.С. ....................................................................80

КАВКАЗ В ИССЛЕДОВАНИЯХ ДОКУЧАЕВА В.В. ........................................ 84

Керимов И.А., Гагаева З.Ш. ....................................................................84

СИСТЕМА ИЗУЧЕНИЯ ГОРНЫХ ЛАНДШАФТОВ ПРИ ПОДГОТОВКЕ ГЕОГРАФОВ-ЛАНДШАФТОВЕДОВ В МГУ ИМЕНИ М.В. ЛОМОНОСОВА ........................................ 89

Петрушина М.Н. ....................................................................89

GIS ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ RS ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԱՂԱԿԱԼԱԾ ՀՈՂԵՐԻ ԹՎԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ ........................................ 95

Եղիազարյան Գ.Մ., Եղիազարյան Ա.Գ. ....................................................................95

ՀՀ ՀՈՂԵՐԻ ԴԵԳՐԱԴԱՑԻԱՅԻ ՎՐԱ ԱՆՏԱՌԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ) ....... 101

Պ.Գ. Դավթյան, Ա.Հ. Հովհաննիսյան, Ե.Ս. Մանուկյան, Տ.Պ. Դավթյան, Ա.Հ. Վարդանյան ....... 101

ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՊՐԱԳՄԱՏԻԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՌԻՍԿԵՐՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (ՀՀ տարածքի օրինակով) ....... 105

Գ.Մ Կարապետյան, Ա.Գ Կարապետյան ....... 105

## ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ ....... 110

МЕДИКО-ГЕОГРАФИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ ОНКОЛОГИЧЕСКИХ ЗАБОЛЕВАНИЙ В РОССИИ ....... 110

Бадов А.Д., Бадов О.А. ....... 110

ОСНОВНЫЕ ФАКТОРЫ ТРАНСФОРМАЦИИ ПРОСТРАНСТВЕННОЙ СТРУКТУРЫ ОБЩЕСТВА СОВРЕМЕННОЙ РОССИИ ....... 113

Мартынов В.Л. ....... 113

ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՈՒ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ....... 118

Ա.Հ.Պոտոսյան ....... 118

ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՇԱՐԺԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ....... 123

Անդրեասյան Ա. Ս. ....... 123

ՀՀ-ՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ....... 129

Վ.Գ.Մանասյան ....... 129

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՆՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ....... 134

Ղամբարյան Գ.Գ. ....... 134

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ (ԽՈՇՈՐԱՑՄԱՆ) ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ....... 139

Մանուկյան Գ. Վ., Ղազեյան Խ. Ա., Ալեքսանյան Ա. Ա. ....... 139

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ (սոցիալ-աշխարհագրական վերլուծություն) ........ 143

Մուրադյան Յու. Հ., Մուրադյան Մ. Յու., Սամվելյան Ն. Ի. ........ 143

«ՀԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ». ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ........ 148

Ներսիսյան Ա. Հ., Սրտաշյան Վ. Բ. ........ 148

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՏԻՊՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ........ 153

Ներսիսյան Ա. Հ. ........ 153

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ........ 158

Սչանյան Ա.Վ. ........ 158

**ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ** ........ 162

ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ (Մանթաշի գետավազանի որոշ բնաղբյուրների օրինակով) ........ 162

ԱՂԻՆՅԱՆ Ա.Հ., ՄԿՐՏՉՅԱՆ Տ.Գ. ........ 162

ՍԱՀՔԻ ԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՓԱՓՈՒԿ ՊԼԱՍՏԻԿ ԿՈՆՍԻՍՏԵՆՑԻԱՅԻ ԿԱՎԱՅԻՆ ԳՐՈՒՆՏՆԵՐԻ ՎԻԲՐՈՍՈՂՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........ 165

ՀԱՅՐՈՅԱՆ Ս.Հ., ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Կ.Ա., ՀԱՅՐՈՅԱՆ Հ.Ս ........ 165

ГЕОЛОГО-ГЕОХИМИЧЕСКИЕ И ГЕОФИЗИЧЕСКИЕ КРИТЕРИИ ОЦЕНКИ ПЕРСПЕКТИВ МЕДНОКОЛЧЕДАННОГО ОРУДЕНЕНИЯ В ПРЕДЕЛАХ АРЦАХСКОЙ ЧАСТИ МАЛОГО КАВКАЗА ........ 170

Г.А. Габриэлянц, Х.В. Хачанов, Г.В. Маркосян, С.В. Восканян ........ 170

DISPLACEMENTS ON SOFT SOILS SITES AT STRONG EARTHQUAKE AND IMPLEMENTATION OF SEISMIC JOINT ........ 176

Razmik Atabekyan, Lusine Atabekyan ........ 176

INTERFEROMETRIC SAR MODELING OF GEOPHYSICS MEASUREMENTS ........ 182

Andon Lazarov, Marat Grigoryan, Dimitar Minchev, Chavdar Minchev, Atanas Dimitrov ........ 182

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ СЕЙСМИЧЕСКОГО РИСКА ПОВРЕЖДЕНИЙ ЖИЛЫХ ЗДАНИЙ ГОРОДОВ СЕВЕРНОЙ АРМЕНИИ ........ 188

Назаретян С. Н., Арутюнян А.Г., Мугнецян Э.А., Мовсисян Ж.К., Карапетян Г.Р. ........ 188

ГЕОФИЗИЧЕСКИЕ ПРИЗНАКИ РАЗЛОМОВ ТЕРСКО-КАСПИЙСКОГО ПРОГИБА 193

Керимов И.А., Абубакарова Э.А. ........ 193

РЕГИОНАЛЬНОЕ ПОЛЕ НАПРЯЖЕНИЙ В ВЕРХНЫХ ЧАСТЯХ ЗЕМНОЙ КОРЫ ТЕРРИТОРИИ АРМЕНИИ И ВЕРОЯТНЫЕ НАПРАВЛЕНИЯ ПОДВИЖЕК ПО РАЗЛОМАМ ........ 199

Назаретян С. Н., Мирзоян Л.Б., Шахбекян Т.А., Гарибян, З.В., Мовсисян Ж.К. ........ 199

ПРИНЦИПЫ СОСТАВЛЕНИЯ СПЕЦИАЛЬНОЙ МАКРОСЕЙСМИЧЕСКОЙ ШКАЛЫ ПО ПОВРЕЖДЕНИЯМ ЗДАНИЙ АРМЯНСКИХ ЦЕРКВЕЙ ДЛЯ ОЦЕНКИ ИНТЕНСИВНОСТИ ИСТОРИЧЕСКИХ ЗЕМЛЕТРЯСЕНИЙ ........ 204

Назаретян С. Н., Мхитарян К.А., Мугнецян Э.А., Тигранян М.Т. ........ 204

ПОДЗЕМНЫЙ СТОК БАССЙНА ОЗЕРА СЕВАН (по данным электроразведки) ........ 208

Григорян М.А., Варданян В.П., Манукян Е.С ........ 208

СЕЙСМОСТОЙКОЕ СТРОИТЕЛЬСТВО ИЗ ЛЕГКИХ МЕТАЛЛОКОНСТРУКЦИЙ С УЧЕТОМ ИНЖЕНЕРНЫХ ГЕОФИЗИЧЕСКИХ И ГЕОЛОГИЧЕСКИХ ИЗЫСКАНИЙ 213

Марутян А.С., Ашчян Т.А ........ 213

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԴԻՏԱՐԿՎԱԾ M> 4 ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐԻ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԵՎ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐԻ ԿԱՏԱԼՈԳ ԸՍՏ ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԻԴՐՈԵՐԿՐԱԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ........ 219

Ասլանյան Ս.Ռ., Ավետիսյան Ս.Մ., Ղարիբյան Զ.Վ., Հովհաննիսյան Ս.Ռ, Նազարեթյան Ս.Ն., Սարգսյան Հ.Վ., Տեր-Գրիգորյան Թ.Ս ........ 219

ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ԵՐԿՐԱԿԵՂԵՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱ-ԴԻՆԱՄԻԿ ՄՈԴԵԼԸ, ՈՐՊԵՍ ՍԵՅՍՄԻԿ ՎՏԱՆԳԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ՀԻՄՔ ........ 223

Հովհաննիսյան Հ.Հ., Գասպարյան Հ.Ս., Ավդալյան Ա.Հ ........ 223

ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ՏԵԿՏՈՆԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԱՐԱԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԸ ........ 228

Հովհաննիսյան Ս.Ռ., Մակարյան Ա.Հ ........ 228

ՀՐԱԲԽԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ (Արագածի լեռնազանգվածի օրինակով) ........ 232

Վ.Պ.Վարդանյան, Վ.Դ. Անդրեասյան ........................................................................................232
МЕТОДИКА ЛИТОГЕОХИМИЧЕСКИХ ПОИСКОВ ЗОЛОТОРУДНЫХ МЕСТОРОЖДЕНИЙ ........................................................................................ 236

Л.В. АРУТЮНЯН ........................................................................................236

ՋՐԱՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ ....................242

ՍԵՎԱՆԱ ԼԻՃ ԹԱՓՎՈՂ ԳԵՏԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ՄԻՋԻՆ ՏԱՍՆՕՐՅԱԿԱՅԻՆ ՆՎԱԶԱԳՈւՅՆ ԵԼՔԵՐԻ ՓՈՓՈԽՈւԹՅԱՆ ՎԵՐԼՈւԾՈւՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈւՄԸ ........ 242

Վ. Գ Մարգարյան, Տ. Մ. Դավթյան, Ա.Մ. Ամրոյան, Ս. Ա. Խուրշության, Կ.Գ.Սարսգյան, Վ. Ա.Մաթևոսյան ........................................................................................242

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՋՐԻ ՊԱՀԱՆՋԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ...... 246

Գ.Մ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ........................................................................................246

SOIL VARIABILITY AND SOIL EROSION ON THE SOUTH-EASTERN SLOPES OF MT. ARAGATS........................................................................................ 250

Kolja Thestorf, Hilmar Schröder, Trahel Vardanian, Hrachuhi Galstyan ..................................250

СТОХАСТИЧЕСКИЙ ПОДХОД К ИССЛЕДОВАНИЮ ПРОЦЕССА ОДНОВРЕМЕННОГО ВОЗНИКНОВЕНИЯ НЕКОТОРЫХ ОПАСНЫХ МЕТЕОРОЛОГИЧЕСКИХ ЯВЛЕНИЙ ........................................................................................ 255

Элизбарашвили Э.Ш. ........................................................................................255

ВОДНЫЙ БАЛАНС И ВОДНЫЙ РЕЖИМ РЕК ЕВРОПЕЙСКОЙ ТЕРРИТОРИИ РОССИИ В СОВРЕМЕННЫХ КЛИМАТИЧЕСКИХ УСЛОВИЯХ .................................. 260

Фролова Н.Л., Григорьев В.Ю., Киреева М.Б. ........................................................................................260

СЕЗОННЫЕ ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ ГРОЗ НА АЭРОДРОМЕ ОДЕССА 265

Недострелова Л.В., Чумаченко В.В. ........................................................................................265

НОВЫЕ ПЕРСПЕКТИВЫ В ОБЛАСТИ ГИДРОМЕТЕОРОЛОГИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ И ПОДГОТОВКИ КАДРОВ: ГЛОБАЛЬНЫЙ КАМПУС ВМО .......... 269

Мамаева М. А. ........................................................................................269

НАВОДНЕНИЯ НА ЗАПАДНОМ ПОБЕРЕЖЬЕ СЕВЕРНОГО КАВКАЗА (РОССИЯ). 274

Магрицкий Д.В. ........................................................................................274

ЗАКОНОМЕРНОСТИ ФОРМИРОВАНИЯ СТОКА МАЛЫХ РЕК ЧЕРНОМОРСКОГО ПОБЕРЕЖЬЯ СЕВЕРНОГО КАВКАЗА ........................................................................................ 279

Косицкий А.Г. ....................................................................................................279
СОВРЕМЕННЫЙ МЕТОД ПРОГНОЗИРОВАНИЯ ГИДРОЛОГИЧЕСКИХ РИСКОВ В ПЕРИОД ВЕСЕННЕГО ПОЛОВОДЬЯ РЕК ........................................ 282
Докус А.А., Шакирзанова Ж.Р. ................................................................................282
ВЛИЯНИЕ ФИЗИКО-ГЕОГРАФИЧЕСКИХ И ГЕОЛОГИЧЕСКИХ ФАКТОРОВ НА ФОРМИРОВАНИЕ СОСТАВА ПОВЕРХНОСТНЫХ ВОД В БАССЕЙНАХ ПРИПЯТИ И ДЕСНЫ ........................................................................................ 287
Даус М.Е. ..........................................................................................................287
ОЦЕНКА ВЛИЯНИЯ ИЗМЕНЕНИЙ КЛИМАТА НА ПЕРСПЕКТИВЫ ВЫРАЩИВАНИЯ БИОЭНЕРГЕТИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ МИСКАНТУСА В УКРАИНЕ ...................................................................................................... 292
Вольвач О.В. .....................................................................................................292
ГИДРОЛОГО-ЭКОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ ИСПОЛЬЗОВАНИЯ ПРИРОДНЫХ РЕСУРСОВ ПРИДУНАЙСКИХ ОЗЕР УКРАИНЫ ........................................ 297
Романова  Е.А., Шакирзанова Ж.Р. ............................................................................297
РЕЖИМ АТМОСФЕРНЫХ ОСАДКОВ  В ЮЖНЫХ РАЙОНАХ УКРАИНЫ В НАЧАЛЕ XXI ВЕКА ........................................................................................ 302
Ивус Г.П., Гончарова Л.Д., Косолапова Н.И. .................................................................302
МАКСИМАЛЬНЫЙ СТОК РЕК ГОРНОГО КРЫМА В СОВРЕМЕННЫХ КЛИМАТИЧЕСКИХ УСЛОВИЯХ ........................................................ 307
Овчарук В.А., Тодорова Е.И.. ...................................................................................307
АНАЛИЗ ОСОБЕННОСТЕЙ  ФОРМИРОВАНИЯ МЕЖЕННОГО СТОКА РЕК В ЗОНЕ НЕДОСТАТОЧНОЙ ВОДНОСТИ УКРАИНЫ ........................................ 312
Овчарук В.А., Кущенко Л.В., Прокофьев О.М. ................................................................312
ՍԵՐՎԻՍԻ ԲԱԺԻՆ ......................................................................................317
РОЛЬ СОЦИАЛЬНЫХ КОММУНИКАЦИЙ В СОВРЕМЕННОМ ОБЩЕСТВЕ ............ 317
Варданян Р.Р., Суварян С.Р. ....................................................................................317
СОВРЕМЕННЫЕ ГЕОЭКОНОМИЧЕСКИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИСТСКИХ СВЯЗЕЙ РОССИЯ-АРМЕНИЯ ................................................................ 321
Деточенко Л.В. ....................................................................................................321

МЕТОДОЛОГИЯ ИНТЕГРАЛЬНОЙ ОЦЕНКИ ТУРИСТСКОГО ПОТЕНЦИАЛА ТЕРРИТОРИИ ........ 327

Сафарян А.А., Алексанян Г.П. ........ 327

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՍԵԶՈՆԱՅՆՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........ 331

Ալեքսանյան Գ. Փ. ........ 331

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԴԵՍՏԻՆԱՑԻԱՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ........ 336

Նավասարդյան Ա.Վ. ........ 336

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԴԵՍՏԻՆԱՑԻԱՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ ........ 340

Գևորգյան Շ.Վ. ........ 340

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ........ 345

Գրիգորյան Վ.Վ, Քեյյան Ս.Ս., Հովհաննիսյան Ն.Ա. ........ 345

ԷԿՈԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ........ 350

Փեթակչյան Մ. Հ. ........ 350

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ........ 353

Մանասյան Գ. Ս. ........ 353

ՇԻՐԱԿԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ) ........ 358

Մարտիրոսյան Լ.Մ., Աբրահամյան Վ.Մ. ........ 358

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ (ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ) ........ 362

Սարգսյան Տ.Ա. ........ 362

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԺՇԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ........ 366

Վալեսյան Ա. Պ. ........ 366

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ........ 371

Դավթյան Տ.Պ. ........ 371

ՍԵՐՎԻՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ........ 375

Ավագյան Ա.Ռ., Հայրապետյան Հ.Լ. ........ 375

ԿԱՅՈՒՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ........ 380

Սուվարյան Ս. Ռ. ........ 380

КУЛЬТУРОТВОРЧЕСКАЯ МИССИЯ ТУРИЗМА КАК НАДПРЕДМЕТНАЯ СОСТАВЛЯЮЩАЯ ПРИ ПРОФЕССИОНАЛЬНОЙ ПОДГОТОВКЕ БАКАЛАВРОВ ПО НАПРАВЛЕНИЮ «ТУРИЗМ» ........ 384

Гаджиева Е.А.,Комиссарова Т.С. ........ 384

ГЕОЭКОЛОГИЧЕСКАЯ ОЦЕНКА РОСТОВСКОЙ ОБЛАСТИ ДЛЯ ПРОЕКТИРОВАНИЯ ОСОБО ОХРАНЯЕМЫХ ПРИРОДНЫХ ТЕРРИТОРИЙ И РАЗВИТИЯ ЭКОЛОГИЧЕСКОГО ТУРИЗМА ........ 388

Ивлиева О.В. ........ 388

ПРИОРИТЕТНЫЕ НАПРАВЛЕНИЯ ГЕОГРАФИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ ТУРИЗМА И РЕКРЕАЦИИ И ИХ ОСНОВНЫЕ РЕЗУЛЬТАТЫ ........ 392

Григоренко Т.Н. ........ 392